ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2025 թ. N 142-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 96-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 103-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, ինչպես նաև 34-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 2025 թվականի հունիսի 12-ի N 01/15.1/3544-2025 գրությունը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 5-ի ««Կարինե Հովակիմյան Հայկարամի» անհատ ձեռնարկատիրոջը արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին» N 96-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման նախաբանում *«42»* թիվը փոխարինել *«45»* թվով:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 14-ի «Ջերմուկ համայնքի անչափահաս բնակիչներ Եվա, Աննա և Նարեկ Ալեքսանդրի Հովհաննիսյանների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու, խնամակալ և հոգաբարձու նշանակելու մասին» N 103-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետում *«հաշվի առնելով նրանց՝առանց ծնողական խնամքի մնալու փաստը»* բառերը փոխարինել *«նրանց դաստիարակելու նպատակով»* բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2025 թ. N 143-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարո Հովհաննեսի Կարապետյանի հայտը (մտից՝ N 888, 2025 թվականի հունիսի 9)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Կարո Կարապետյանին տալ 2025 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Իսրայել Օրու փողոցի N 3 հասցեում գտնվող՝ «Ադամանդ-Կ» ՍՊ ընկերությանը պատկանող բարի և առևտրի գործունեության համար նախատեսված տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի ու արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություններ (համապատասխանաբար՝ Թույլտվություն N 51 և N 52):

2. Անհատ ձեռնարկատեր Կարո Կարապետյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031484 հաշվեհամարին՝ 1688 (հազար վեց հարյուր ութսունութ) դրամ՝ արտաքին գովազդ տեղադրելու համար՝ յուրաքանչյուր ամիս

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կարո Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 19
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թ. N 144-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷԴԳԱՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Էդգար Պապոյանի հայտը (մտից՝ N 957, 2025 թվականի հունիսի 19)՝ ***որոշում եմ***՝

1. Անհատ ձեռնարկատեր Էդգար Պապոյանին տալ 2025 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 3-րդ նրբանցքի N 12 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 53):

2. Անհատ ձեռնարկատեր Էդգար Պապոյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 9750 (ինը հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Էդգար Պապոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թ. N 145-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2.3-3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 13-ի N 40-Լ որոշման դրույթների կատարումն ապահովելու նպատակով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի N 18-Ա որոշման N 5 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2.3-3 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի գլխավոր մասնագետ) անձնագրում կատարել հետևյալ լրացումը՝ «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետը լրացնել նոր՝ «գա» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«գա/ իրականացնում է համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի վարման պարտականությունները, պատասխանատու է գրանցամատյանի պատշաճ վարման և պահպանման համար»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թ. N 146-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 17-ի ««Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,07 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 132-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «ՃԱՆԱՉԵԼՈՒ» բառից հետո ավելացնել «, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ» կետադրական նշանը և բառերը,

բ/ ավելացնել նոր՝ 2.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝ «2.1. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման հողամասի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թ. N 147-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 22-28-րդ կետերի, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 20-ի N 15-Ա որոշման, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2025 թվականի հունիսի 23-ի N 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ***՝

1. Հաստատել բնակելի կառուցապատման նպատակով 2025 թվականի հունիսի 23-ին կայացած Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 4/1 հասցեում գտնվող 10-016-0030-0030 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման), մակերեսը՝ 400 (չորս հարյուր) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 23-ի N 2 արձանագրությունը՝ աճուրդի հանված 10-016-0030-0030 կադաստրային ծածկագրով հողամասը 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից ***Սարգիս Անուշավանի Հովսեփյանին***:

2. Սույն որոշման առաջին կետում նշված գումարի վճարման հաշվեհամարն է՝ 900365031625:

3. Սարգիս Անուշավանի Հովսեփյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարգիս Անուշավանի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թ. N 148-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 112-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ–22052025-10-0171 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,09579 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 112-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «հողամասը» բառից հետո ավելացնել «՝ ՓՈՓՈԽՎԱԾ ՀՈՂԱՏԵՍՔՈՎ» կետադրական նշանը և բառերը,

բ/ ավելացնել նոր՝ 1.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝ «1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի հիման վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի բնակչի կողմից ապօրինի հողօգտագործման արդյունքում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը վերածվել է պտղատու այգու՝ համայնքի կադաստրային քարտեզում հողամասի հողատեքը փոխել արոտավայրից բազմամյա տնկարկի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թ. N 149-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Մարտիկ Բաբկենի Աղաբեկյանի դիմումը (մտից՝ N 970, 20.06.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Մարտիկ Բաբկենի Աղաբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 0,26 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-029-014, վկայական N 2348805, տրված 27.02.2008թ.) տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի N 14:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թ. N 150-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇԱՌԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Շառլ Մաթևոսյանի հայտը (մտից՝ N 978, 2025 թվականի հունիսի 23)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Շառլ Մաթևոսյանին տալ 2025 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում, դեպի ըմպելասրահ տանող ճանապարհի վրա գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 54):

2. Անհատ ձեռնարկատեր Շառլ Մաթևոսյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Շառլ Մաթևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2025 թ. հունիսի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թ. N 151-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Շահենի Առաքելյանի դիմում-հայտերը (մտից՝ N 982, 2025 թվականի հունիսի 23)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանին տալ 2025 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 7 հասցեում գտնվող հասարակական նշանակության օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի ու արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություններ (համապատասխանաբար՝ Թույլտվություն N 54, N 55 N 56):

2. Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանին պարտավորեցնել երկու ամսվա հաշվարկով վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 37500 (երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար,

բ/ 900365031484 հաշվեհամարին՝ 5400 (հինգ հազար չորս հարյուր) դրամ՝ արտաքին գովազդ տեղադրելու համար՝ յուրաքանչյուր ամիս

գ/ 900365031336 հաշվեհամարին՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ օգոստոսի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թ. N 152-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանի հայտը (մտից՝ N 977, 2025 թվականի հունիսի 23)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին տալ 2025 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 22/1/1,22/2 հասցեում գտնվող ռեստորանում հանրային սննդի կազմակերպման և իրացման ու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություններ (Թույլտվություն N 57 և N 58):

2. Անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին պարտավորեցնել վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի

ա/ 900365031435 հաշվեհամարին՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ եռամսյակի հաշվարկով,

բ/ 900365031336 հաշվեհամարին՝ 18750 (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հարություն Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի յուրաքանչյուր տեսակի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2025 թ. N 153-Ա

«ՆՈՐԱՅՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՑՈԼԱԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 88-Ն որոշումների, հաշվի առնելով Նորայի Ցոլակի Խաչատրյանի դիմում-հայտը (մտից՝ N 992, 2025 թվականի հունիսի 25)՝ ***որոշում եմ***՝

1. Թույլատրել «Նորայի Խաչատրյան Ցոլակի» անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 4/1 հասցեում, ըստ ներկայացված էսքիզի, տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 59):

2. Նորայի Ցոլակի Խաչատրյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորայի Ցոլակի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2025 թ. N 154-Ա

ԱՐԱՐԱՏ ՀՐԱՉԻԿԻ ԲԱԳՐԱՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Արարատ Հրաչիկի Բագրատյանի դիմումը (մտից՝ N 1007, 27.06.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Արարատ Հրաչիկի Բագրատյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության իրավունքի N 1552252) պատկանող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու վրա գտնվող անշարժ գույքին՝ տնամերձ հողամասին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 58/6:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2025 թ. հունիսի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2025 թ. N 155-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներին համապատասխան, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի զորահավաքային պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի զորահավաքային պլանի փոփոխությունները (կատարված ճշգրտումները):

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2025 թ. N 156-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Ջերմուկ համայնքում աճուրդների անցկացման կանոնակարգի 7-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 19 (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0031-0140), Գարնանային փողոցի N 2 (կադաստրային ծածկագիը՝ 10-002-0038-0196), Ազատամարտիկների փողոցի N 17/2 (կադաստրային ծածկագիը՝ 10-002-0032-0132) հասցեներում գտնվող և Գնդեվազ գյուղի 10-016-0201-0002, 10-016-0201-0003, 10-016-0235-0003, 10-016-0235-0002, 10-016-0208-0023, 10-016-0201-0005, 10-016-0228-0024 կադաստրային ծածկագրերով հողամասերն օտարելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի օգոստոսի 11-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 7
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2025 թվականի հուլիսի 7-ի N 156-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի բաց դասական աճուրդով վաճառքի մասին

Լոտ N 1- բնակելի կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Սայաթ Նովայի փողոց N 19, կադաստրային ծածկագիը՝ 10-002-0031-0140, մակերեսը՝ 0,07326 հա, մեկնարկային գինը՝ 2200000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ:
Լոտ N 2- բնակելի կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Գարնանային փողոց N 2, կադաստրային ծածկագիը՝ 10-002-0038-0196, մակերեսը՝ 0,0108 հա, մեկնարկային գինը՝ 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար) դրամ:
Լոտ N 3- հասարակական կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց N 17/2, կադաստրային ծածկագիը՝ 10-002-0032-0132, մակերեսը՝ 0,07 հա, մեկնարկային գինը՝ 2025000 (երկու միլիոն քսանհինգ հազար) դրամ:
Լոտ N 4- գյուղատնտեսական գործունեության համար(վարելահող), հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, կադաստրային ծածկագրերը՝ 10-016-0201-0002, 10-016-0201-0003, 10-016-0235-0003, 10-016-0235-0002, 10-016-0208-0023, 10-016-0201-0005, 10-016-0228-0024, ընդհանուր մակերեսը՝ 2,753725 հա, մեկնարկային գինը՝ 1195000 (մեկ միլիոն հարյուր իննսունհինգ հազար) դրամ:
Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ, այլ սահմանափակումներ: Աճուրդի մասնակցության վճարը 20 000 դրամ է N 1, N 2 և N 3 լոտերի դեպքում և 10 000 դրամ՝ N 4 լոտի դեպքում, որը անկախ աճուրդի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ը, որը աճուրդի մասնակիցները մուծում են աճուրդի անցկացման օրը: Աճուրդի դրված հողամասերի աճուրդային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Ցանկացողները ներկայացնում են հայտ՝
կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Աճուրդի կանոնակարգին, պայմանագրերի նախագծերին և ճարտարապետահատակագծային առաջադրանքներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմաններին ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով: Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդում հաղթող ճանաչված անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել առաջարկած ողջ գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր: Աճուրդները կկայանան 2025 թվականի օգոստոսի 11-ին ժամը 11.00-ին, համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից 3 աշխատանքային օր առաջ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025 թ. N 157-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՑՆՈՂ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻՆ ԽԱՆԳԱՐՈՂ ԾԱՌԵՐԻ ԷՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով, հաշվի առնելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Ա. Ասատրյանի՝ ս/թ հուլիսի 3-ի գրությունը (մտից N 1037)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության 220 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում եզրաչափերը վերականգնելու նպատակով Ընկերությանը թույլատրել իրականացնել ծառերի էտման աշխատանքներ:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանը՝ նշված աշխատանքների կատարման հսկողությունը դնելով «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Աղասի Առաքելյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 14
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թ. N 158-Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԽԱՉԱՏՈՒՐ ՀՐԱՉԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով Խաչատուր Հրաչիկի Սողոմոնյանի դիմումը (մտից՝ 2025 թվականի ապրիլի 1-ի N 483)՝ ***որոշում եմ՝***

1. Խաչատուր Հրաչիկի Սողոմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2001 թվականի հոկտեմբերի 29-ի տրված N 22122023-10-0022 վկայական) Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 8-րդ փողոցի 15-րդ շենքի N 1 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի բաժանված մասերին տրամադրել հասցեներ՝

73,4 քմ մակերեսով հատվածին (բնակարանի 1-ին հարկ)՝ չափագրման ծածկագիր՝ 2025PGMCWF

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 8-րդ փողոց 15-րդ շենք N 1

66,1 քմ մակերեսով հատվածին (բնակարանի 2-րդ հարկ)՝ չափագրման ծածկագիր՝ 20258YYFBY,

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 8-րդ փողոց 15-րդ շենք N 1/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչատուր Հրաչիկի Սողոմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թ. N 159-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու մասին» N 289-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման 3-րդ կետում ավելացնել «ը» ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«ը/ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 8-րդ փողոցի 15-րդ շենքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասը, որն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում է տվյալ շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին, կազմում է 0,02 հա»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2025 թ. N 160-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով հանգուցյալ Գագիկ Մանուկյանի իրվահաջորդ հանդիսացող Ջերմուկ համայնքի բնակիչ Մանուկ Գագիկի Մանուկյանի դիմումը (մտից՝ N 1109, 17.07.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի Կ. Աղաբեկյան փողոցի 3-րդ շենքում գտնվող բնակարանը, նախկինում տրված հասցեն՝ ք. Ջերմուկ, գ. Կեչուտ, 3–րդ փողոց, 43-րդ շենքի թիվ 2 բնակարան, վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, Կ. Աղաբեկյան փողոց 3–րդ շենք N 7:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2025 թ. N 161-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,11809 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի գտնվող 0,11809 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025RDVBGQ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մաշտոցի փողոց N 14:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հուլիսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2025 թ. N 162-Լ

«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի 19-րդ կետին և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի N 1141-Լ հրամանով հաստատված կարգին համապատասխան, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Ս. Մկրտչյանի զեկուցագիրը (մտից N 1129, 21.07.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման և գյուղատնտեսական կարևորագույն արտադրատեսակների ներկրումից կախվածության նվազեցման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունում բուսաբուծության ոլորտի նախանշված թիրախային ցուցանիշներն ապահովելու նպատակով իրականացվող «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակներում համատարած մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սևակ Մկրտչյան– Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար՝ Վաղինակ Մանուկյան– համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

անդամներ՝ Արսեն Գառնիկյան– համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Մեսրոպ Հարությունյան– համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

2. Սույն որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովին՝ ծրագրի շրջանակներում կատարված ցանքատարածություններում համատարած մոնիթորինգն իրականացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել իր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները և մոնիթորինգի դրական եզրակացությանը կցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի N 1141-Լ հրամանով հաստատված կարգի 12-րդ կետով սահմանված

տեղեկատվությունը՝ ներկայացնել էկոնոմիկայի նախարարություն՝ նախարարության կողմից մշակված ու հաստատված ձևաչափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2025 թ. հուլիսի 21
Ջերմուկ